Կարգապահական գործ թիվ ԿԳ-24163

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Եղիազար Բաղդասարյանի և փաստաբան Գեղամ Մարգարյանի,

քննության առնելով փաստաբան **Գեղամ Հարությունի Մարգարյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 578), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Եղիազար Բաղդասարյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ դեռևս 2008 թվականին Գառնի համայնքից գնել է հողատարածք և օգտագործում է այն որպես իր սեփականություն, սակայն հետագայում տեղեկացել է, որ նշված հողատարածքը կեղծ փաստաթղթերի հիման վրա ձեռք է բերել Վահագն Ղազարյանը:

Դիմողը հայտնել է, որ նշված հողատարածքի նկատմամբ իր սեփականության իրավունքի ճանաչման նպատակով դիմել է փաստաբան Հարություն Հարությունյանին, ով ներկայացրել է հայցադիմում Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան:

Դիմողի պնդմամբ, դատարանը արգելանք է դրել հողամասի վրա, սակայն չնայած նշված հանգամանքին՝ ինքը 2024 թվականի հունիսի 24-ին, գալով հողատարածք, տեսել է, թե ինչպես էին Վահագն Ղազարյանի փաստաբան Գեղամ Մարգարյանը և մի քանի հոգի կտրում իր աճեցրած ծառերը:

Դիմողը հավելել է, որ իր այն հարցին, թե ինչու է կտրում ծառերը, քանի դեռ գործը դատարանում է, փաստաբան Գեղամ Մարգարյանը պատասխանել է, որ դա իր սեփականն է, «լավ է անում», ինչից հետո սկսել է վիրավորել Դիմողին և սպառնալիքներ հնչեցնել «համը չհանես, թե չէ զենքով կխփեմ լեշտ կփռեմ»:

թիվ ԿԳ-24163-2-Ա
27.11.2024թ.

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Գեղամ Մարգարյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 20.08.2024թ. դիմումով ըստ էության պնդել է նախկինում արտահայտած դիրքորոշումները: Բացի այդ, Դիմողը նաև հայտնել է, որ Փաստաբանի ապօրինի գործողություններիո ականատես են եղել Արամ Խաչատրյանը, Ռազմիկ Հայրապետյանը, Մարատ Բաղդասարյանը և Հրաչյա Թադևոսյանը, ովքեր հաստատել են իրանց վկա լինելու հանգամանքը՝ ստորագրելով 20.08.2024թ. դիմումը:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Դիմողը հայտնել է դիրքորոշում առ այն, որ ծառահատումն իրականացրել է մեկ այլ անձ Փաստաբանի հանձնարարությամբ, իսկ Փաստաբանը ներկա է գտնվել այդ գործընթացին:

Դիմողը հավելել է նաև, որ լսել է *«համը չհանես, թե չէ զենքով կխփեմ լեշդ կփռեմ»* արտահայտությունները, իսկ *«ով փորձի խոչնդոտել կամ ինձ խանգարել դիակները կփռեմ»* արտահայտությունները կատարվել են այլ անձանց ներկայությամբ, երբ Դիմողը ներկա չի եղել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Գեղամ Մարգարյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Եղիազար Բաղդասարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 24.07.2024 թվականի բացատրությամբ հայտնել է, որ կարգապահական վարույթի հարուցման հիմքերը բացակայում են:

Փաստաբանը նշել է, որ 24.06.2024 թվականին Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գավառ գյուղի Ազատամարտիկների 2 հասցեով հողամասի տարածքում իր մասնակցությամբ գործողությունները իրականացվել են՝

- Հողամասի սեփականատեր Վահագն Ղազարյանի հանձնարարության հիման վրա,
- Հասարակական կարգը պահպանելու և ծառահատման աշխատանքների իրավաչափության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով՝ հրավիրված ՀՀ ոստիկանության ծառայողների, Գառնի համայնքապետարանի ներկայացուցիչների ներկայության և հսկողության պայմաններում,
- Հողամասի նպատակային և գործառնական նշանակության խախտմամբ օգտագործումը դադարեցնելու, դրանով հանդերձ հողամասի սեփականտեր Վահագն Ղազարյանի նկատմամբ ՀՀ վարչական իրավախախտումների վրաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու հիմքերը վերացնելու նպատակով:

Փաստաբանի պնդմամբ, դիմումում նկարագրված հանգամանքներն առ այն, որ Փաստաբանը վիրավորել և սպառնալիքներ է հնչեցրել, իրականությանը չեն համապատասխանում:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը նշված հողատարածքի սեփականատեր չի հանդիսանում, իսկ թիվ ԿԴ/8680/02/23 քաղաքացիական գործով ոչ թե արգելանք է դրվել նշված հողամասի նկատմամբ, այլ Վահագն Ղազարյանին արգելվել է հողամասի նկատմամբ օտարման և որևէ գույքային իրավունքով ծանրաբեռնման գործողություններ կատարելը:

Նշվածի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 19.08.2024թ. ներկայացրած դիմումով, ըստ էության, մեծամասամբ անդրադարձել է Պալատի կողմից իրականացվող կարգապահական վարույթի իրականացման օրինականության հարցին, ինչպես նաև նշել է, որ իր գործողությունները վեճի առարկա հանդիսացող հողամասի նկատմամբ կրել են բացառապես իրավական բնույթ, իսկ 24.06.2024թ. Փաստաբանը ծառ չի հատել:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ նշելով, որ ինքը խնդրո առարկա դեպքի վայրում ներկա է եղել որպես փաստաբան՝ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա նախապես կատարելով համապատասխան իրավական գործառույթներ և մասնակցելով իր դիմումների հիման վրա պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հսկողությամբ կատարվող գործողություններին, ինչպես նաև հավելելով, որ վարույթը ենթակա է կարճման, քանի որ կարգապահական գործում չկա որևէ ապացույց, որը կհիմնավորեր իրեն վերագրվող վարքագիծը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 31.07.2024թ. թիվ 316-Ա/ԿԳ-24163 որոշմամբ փաստաբան Գեղամ Մարգարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.1 կետի 4-րդ պարբերության և 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին, իսկ այնուհետև՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով որպես վկա է հրավիրվել Դիմողի որդի՝ Մարատ Բաղդասարյանը, ով հայտնել է դիրքորոշում այն մասին, որ Փաստաբանը Դիմողի հասցեին կատարել է *«համը չհանես, թե չէ զենքով կխփեմ լեշդ կփռեմ»* արտահայտությունը:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և</u>

<u>գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 02.10.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 02.10.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 27.11.2024թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Կոտայքի մարզ, Գառնի համայնք, գյուղ Գառնի, Ազատամարտիկների 2 հասցեի սեփականատեր է հանդիսանում Վահագն Ղազարյանը: *Սույն փաստը հաստատվում է սեփականության վկայականի պատճենով:*

2. Ա/Ձ Գեղամ Հարությունի Մարգարյանի և Վահագն Ասքանազի Ղազարյանի միջև 22.12.2022թ. թվականին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ Պայմանագիր),** որի 2.1. կետի համաձայն՝ Փաստաբանը (Կատարողը).

ա) միջոցներ է ձեռնարկում՝ մինչև Կոտայքի մարզ, Գառնի համայնք, գյուղ Գառնի, Ազատամարտիկների 2 հասցեում գտնվող հողամասի /կադաստրային ծածկագիր՝ թիվ 07-021-0306-0020/, /այսուհետ՝ նաև գույք/, նկատմամբ Պատվիրատուի սեփականության իրավունքը գրանցվելը վարչական պատասխանատվություն հանգեցնող՝ նպատակային գործառնական նշանակության խախտմամբ գույքի օգտագործումը դադարեցնելու, հողամասի մուտքը փակելու, հողամասում գտնվող ինքնակամ շինության ներքին հատվածում, ինչպես նաև հողամասի տարածքում՝ առանց հողամասի սեփականատիրոջ թույլտվության, դեռևս չպարզված անձանց կողմից թափված ասբեստի խողովակի կտորներն ու այլ շինարարական աղբը հեռացնելու աշխատանքները իրականացնելը կազմակերպելու ուղղությամբ, և վերահսկում է դրանց իրականացման ընթացքը,

բ) դիմում է վերը նշված աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձառություն ունեցող անձանց,

գ) դիմում է համապատասխան պետական, տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններին աշխատանքների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

դ) աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր սադրանքների և հասարակական կարգը խախտման դեպքերը բացառելու համար դիմում է ՀՀ ոստիկանություն՝ աշխատանքների իրականացման ընթացքում հասարակական կարգը պահելու համար: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճենով:*

3. Փաստաբանը դիմումներ է հասցեագրել ՀՀ ոստիկանություն և Գառնի համայնքի ղեկավարին: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված գրությունների պատճեններով:*

4. 2024 թվականի հունիսի 24-ին Փաստաբանի ներկայությամբ իրականացվել է վեճի

առարկա հանդիսացող հողամասում ծառերի հատում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

5. Թիվ ԿԴ/8680/02/23 քաղաքացիական գործով Դիմողը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Վահագն Ղազարյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԿԴ/8680/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով, ինչպես նաև կողմերի բացատրություններով:*

6. 2023 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ Դատարանը բավարարել է Դիմողի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, ինչի արդյունքում *Վահագն Ղազարյանին արգելվել է կնքել օտարման, և որևէ գույքային իրավունքներով /գրավ, հիփոթեք, վարձակալություն, անհատույց օգտագործում և այլն/* ծանրաբեռնման գործողություններ կատարել: *Սույն փաստը հաստատվում է 26.09.2023թ. հարկադիր կատարողի որոշման պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գեղամ Մարգարյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006թ. և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գեղամ Մարգարյանի նկատմամբ Օրենքի 2.1 կետի 4-րդ պարբերության և 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ:* ***Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:***

Օրենքի 39-9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.1 կետի 4-րդ պարբերության և 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշների առկայության հարցին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Կանոնագրքի 1.1 կետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 կետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:*

Կանոնագրքի 2.1 կետի 4-րդ պարբերության համաձայն՝ *Իր վստահորդի շահերը ներկայացնելիս փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք փաստաբանին կարող են նույնացնել իր վստահորդի հետ: Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակում հօգուտ վստահորդի շահերի իրականացված գործողությունները չեն կարող համարվել վստահորդի հետ նույնացում:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված՝ եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ*

դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ՝ հաշվի առնելով, որ փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը: Իր հերթին Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Ընդ որում, նկատի ունենալով փաստաբանի անկախության սկզբունքի ապահովման կարևորությունը, Կանոնագիրքը նախատեսել է նաև այնպիսի երաշխիք, որն ուղղված է վստահորդին և փաստաբանին չնույնացնելուն, որը սակայն կապված է բացառապես հօգուտ վստահորդի օրենքով չարգելված գործողությունների կատարման հետ: Հետևապես, փաստաբանի համար նախատեսվում է առանձնահատուկ պարտականություն՝ զերծ մնալ այնպիսի գործողությունների կատարումից, որոնց կատարմամբ, անկախ դրանց իրավաչափության աստիճանից, փաստաբանը կարող է նույնացվել իր վստահորդի հետ:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ թիվ ԿԴ/8680/02/23 քաղաքացիական գործով Դիմողը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Վահագն Ղազարյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով Կոտայքի մարզ, Գառնի համայնք, գյուղ Գառնի, Ազատամարտիկների 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին: Նշված գործով 2023 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ Դատարանը բավարարել է Դիմողի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, ինչի արդյունքում Վահագն Ղազարյանին արգելվել է կնքել օտարման, և որևէ գույքային իրավունքներով /գրավ, հիփոթեք, վարձակալություն, անհատույց օգտագործում և այլն/ ծանրաբեռնման գործողություններ կատարել, սակայն նույն գույքի վերաբերյալ այնպիսի փաստացի գործողություններ կատարել, ինչպիսիք ըստ Դիմողի կատարվել են Փաստաբանի կողմից կամ օժանդակությամբ՝ դատարանի կողմից չի արգելվել:

Ավելին, նշված գործով նշված անշարժ գույքի սեփականատեր Վահագն Ղազարյանի ներկայացուցիչը հանդիսանում է Փաստաբանը, ով կնքված Պայմանագրի շրջանակներում իր վստահորդի շահերը պաշտպանելու համար պարտավոր էր վստահորդի հետ կնքված պայմանագրի կատարման նպատակով ձեռնարկել իրավական միջոցներ և վերահսկել դրանց իրականացման ընթացքն իրավական առումով: Նշված շրջանակներում, ստանձնած հանձնարարության կատարման նպատակով Փաստաբանն իրավաբանական

բովանդակությամբ դիմումներ է հասցեագրել ՀՀ ոստիկանություն և Գառնի համայնքի ղեկավարին, ինչից հետո 2024 թվականի հունիսի 24-ին վեճի առարկա հանդիսացող հողամասում իրականացվել է ծառերի հատում, որին ստանձնած իրավաբանական հանձնարարության շրջանակներում ներկա է գտնվել նաև Փաստաբանը, սակայն փաստացի չի իրականացրել ծառերի հատում կամ ոչ իրավաբանական ու փաստաբանի կոչմանը ոչ հարիր գործողություններ:

Հարկ է նշել, որ Փաստաբանին վերագրվել է նաև իր վստահորդի հետ նույնացվելուն ուղղված գործողությունների կատարումից զերծ չմնալու, ինչպես նաև մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը կասկածի տակ դնող կամ խաթարող գործողություններ կատարելու վարքագիծը:

Այս համատեքստում, հաշվի առնելով վերը նկարագրված իրավակարգավորումները և համադրելով դրանք գործով նկարագրված հանգամանքներին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Փաստաբանին վերագրվող վարքագծին առանձին-առանձին:

Ըստ այդմ, իր վստահորդի հետ նույնացվելուն ուղղված գործողությունների կատարումից զերծ չմնալու մասով վարքագծի դրսևորման հարցին անդրադառնալով, Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից ըստ էության ներկայացվել են իրարամերժ պնդումներ: Մասնավորապես, Դիմողը մի դեպքում նշել է, որ վեճի առարկա հանդիսացող հողամասում ծառահատումն ուղղակիորեն իրականացրել է Փաստաբանը, իսկ Հանձնաժողովի նիստի ընթացքում պնդել է, որ ծառահատումն իրականացվել է Փաստաբանի կողմից ներգրավված անձանց կողմից, սակայն անձամբ Փաստաբանը չի իրականացրել այդ գործողությունները:

Միաժամանակ, կարգապահական գործի շրջանակներում Դիմողի կողմից նաև չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ վեճի առարկա հանդիսացող հողամասում ծառահատման աշխատանքները կատարել է անձամբ Փաստաբանը, որպիսի պայմաններում, այդ թվում նաև Դիմողի հակասական դիրքորոշումների հաշվառմամբ, Հանձնաժողովը հաստատված չի համարում Փաստաբանի կողմից իր վստահորդի հետ նույնացվելուն ուղղված գործողությունների կատարումից զերծ չմնալու վարքագիծը:

Ընդ որում, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ փաստաբանական գործունեության անկյունաքարը հանդիսացող անկախության սկզբունքը **(Կանոնագրքի 2.1 ենթակետի 4-րդ պարբերությունը)** փաստաբանի համար նախատեսում է ինչպես արգելք՝ վստահորդի հետ նույնացվելուն ուղղված որոշակի գործողություններից զերծ մնալու մասով, այնպես էլ երաշխիք, որի հաշվառմամբ փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակում հօգուտ վստահորդի շահերի գործողությունների իրականացումը չի կարող համարվել վստահորդի հետ նույնացում:

Նշվածի հաշվառմամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ քննարկման առարկա հանդիսացող իրավիճակում Դիմողը Փաստաբանին վերագրում է փաստացի երրորդ անձի կողմից իրականացված գործողություններ, որոնք ձեռնարկվել են Փաստաբանի պահանջով՝ ի ապահովումն իր վստահորդ՝ Վահագն Ղազարյանի շահերի պաշտպանության՝ Պայմանագրով ստանձնած կոնկրետ հանձնարարության շրջանակներում, որպիսի պայմաններում, Հանձնաժողովը եզրակացնում է, որ Փաստաբանը չի կատարել այնպիսի գործողություն, որով նույնացվել է կամ ողջամտորեն կարող էր նույնացվել իր վստահորդի

հետ, հետևաբար Փաստաբանը թույլ չի տվել Կանոնագրքի 2.1 կետի 4-րդ պարբերության խախտում:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից Դիմողի հասցեին *«համը չհանես, թե չէ զենքով կխփեմ լեշդ կփռեմ»* արտահայտության կատարմանը, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ կարգապահական վարույթի շրջանակներում այդ կապակցությամբ առկա են միայն Դիմողի պնդումները, որոնք վերջինս հիմնավորվում է միայն մեկ անձի՝ իր որդի Մարատ Բաղդասարյանի ցուցմունքով:

Այս համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ նշվածն ինքնին բավարար չէ հիշյալ արտահայտությունները Փաստաբանի կողմից Դիմողի հասցեին կատարված լինելու փաստը հաստատելու համար, առավել ևս այն դեպքում, երբ Դիմողն ընդամենը հայտնել է դիրքորոշում այն մասին, որ Փաստաբանը կատարել է հիշյալ արտահայտությունները, իսկ դա հիմնավորելու համար վկայակոչել է միայն իր որդի Մարատ Բաղդասարյանի ցուցմունքը, մինչդեռ Փաստաբանն իսպառ հերքել է նման վարքագծի դրսևորման հանգամանքը, որպիսի պայմաններում քննարկվող փաստը մնում է վիճելի ու չապացուցված, ինչը մեկնաբանվում է Փաստաբանի օգտին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն կարգապահական գործով Փաստաբանին վերագրվող կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն նրա օգտին՝ հաշվի առնելով, որ Դիմողի կողմից նկարագրված պնդումներն ինքնին չեն կարող բավարար դիտարկվել և գնահատվել Օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման փաստի հաստատման տեսանկյունից, առավել ևս այն դեպքում, երբ Դիմողը հիմնավոր կասկածից վեր չափանիշով պայմանավորված չի ներկայացրել որևէ այլ ապացույց, իսկ այն անձը, ում ցուցմունքի հիմքով առանց որևէ այլ ապացույցի փորձ է արվում հաստատել նշվածը՝ հանդիսանում է Դիմողի որդին, ում ցուցմունքը միայն բավարար ապացույց չի կարող հանդիսանալ քննարկվող իրավիճակում և կարող էր նշանակություն ունենալ այլ ապացույցների (օրինակ՝ օրենքով սահմանված կարգով կատարված ձայնագրություն կամ տեսագրություն, Դիմողի հետ ազգակցական կապ չունեցող այլ՝ «չեզոք» վկաների ցուցմունք և այլն) համակցության պայմաններում: Այլ կերպ ասած, Դիմողը կողմից ներկայացվող ապացույցները պետք է ոչ միայն վերաբերելի և թույլատրելի լինեն, այլ նաև արժանահավատ ու կոնկրետ փաստի հաստատման համար նաև՝ բավարար, մինչդեռ այդ պայմաններն ապահովված չեն:

Նշվածի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտում ևս թույլ չի տվել:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից նկարագրված հանգամանքներին առ այն, որ Փաստաբանը նաև կատարել է *«ով փորձի խոչնդոտել կամ ինձ խանգարել դիակները կփռեմ»* արտահայտությունները, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ սույն կարգապահական վարույթում Փաստաբանին վերագրվող վարքագիծը քննարկվում է բացառապես Դիմողի կողմից կարգապահական վարույթի հարուցման փուլում ներկայացված դիմումում նկարագրված ու կարգապահական վարույթի հարուցման որոշմամբ նշված շրջանակներում, հետևապես, այլ հանգամանքներ, որոնք Դիմողը վկայակոչել է սույն կարգապահական վարույթի հարուցումից հետո, և որոնք հետևաբար դուրս են սույն կարգապահական վարույթի սահմաններից՝ քննարկման ենթակա չեն, և դրանց անդրադարձ չի կատարվում:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված փաստաթղթերն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ **սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում են փաստաբան Գեղամ Հարությունի Մարգարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, քանի որ վերջինիս կողմից կարգապահական խախտում թույլ տրվելու փաստը չի հաստատվում, որպիսի պայմաններում սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:**

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Գեղամ Հարությունի Մարգարյանի (արտոնագիր՝ թիվ 578) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.1 կետի 4-րդ պարբերության և 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24163 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24163-2-Ա
27 նոյեմբերի 2024թ.
ք.Երևան